Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 226 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ և ԱՂԲԱՄԱՆՆԵՐԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում գտնվող Մասիս համայնքի աղբահանության արդյունավետ կազմակերպման նպատակով տրանսպորտային միջոցների և աղբամանների նվիրաբերում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Հրանտ Վարդանյան փողոց 6, ՀՎՀՀ՝ 02269952)
4.	Ծրագիրը կատարողը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Հրանտ Վարդանյան փողոց 6, ՀՎՀՀ՝ 02269952)
5.	Ծրագրի իրականացման վայրը և ընագավառը	ՀՀ Արարատի մարզ, Մասիս համայնք, ընագավառը՝ համայնքային զարգացում
6.	Ծրագրի բյուջեն	120 000 000,00 (հարյուր քսան միլիոն) դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Մասիսի համայնքապետարան (հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, Մասիս համայնք, ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ, թիվ 4)

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի մայիսի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 2023 թվականի արտադրության 1 (մեկ) միավոր աղբատար մեքենա հետևի բարձմամբ ԿՕ-427-72 ամրաշրջանակ ԿԱՄԱԶ-53605-773950-48 մոդելի և 1 (մեկ) միավոր քաղաքային կոմունալ ճանապարհային մեքենա ԿՕ-806 ամրաշրջանակ ԿԱՄԱԶ-43253-2010-69 մոդելի մեքենաների և թվով 230 հատ աղբամանների ձեռքբերում և նվիրաբերում Մասիսի համայնքապետարանին: 2. Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է՝ 120 000 000,00 (հարյուր քսան միլիոն) դրամ: 3. Միջոցառումը նախատեսվում է իրականացնել 2023 թվականի մայիսի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Տվյալ ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել 2023 թվականի արտադրության 1 (մեկ) միավոր աղբատար մեքենա հետևի բարձմամբ ԿՕ-427-72 ամրաշրջանակ ԿԱՄԱԶ-53605-773950-48 մոդելի և 1 (մեկ) միավոր քաղաքային կոմունալ ճանապարհային մեքենա ԿՕ-806 ամրաշրջանակ ԿԱՄԱԶ-43253-2010-69 մոդելի մեքենաներ և թվով 230 հատ աղբամաններ: 2. Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 120 000 000,00 (հարյուր քսան միլիոն) դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	1. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից: 2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թ.-ի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

24.03.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ